



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԲԱՐՁՐՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«14» 08 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԵՈՒԹՅԱՆ

ԲՓ 82

Ձեռնարկողը՝

«<Թաթսթոռուն>» ՍՊԸ

Ք. Երևան, Երզնկյան 79

Գործունեությունը՝

Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի (Թղկուփի գեղամաս) սփորին հորիզոններում և թևներում 2017-2019թթ երկրաբանական ուսումնահրության աշխատանքների ժամկետի երկարաձգման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Հյուսիքի մարզ

«Հրցակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 82

‘14’ 09 2017թ.

**Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի (Թղկուտի տեղամաս) ստորին  
հորիզոններում և թևերում 2017-2019թթ. երկրաբանական ուսումնասիրության  
աշխատանքների ժամկետի երկարաձգման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝

«Թաթարուն» ՍՊԸ

Նախագծող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ

<4> կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզ

Արման Տեղ  
օրինակ  
Տ. Տեղ-

«Թաթարուն» ՍՊ ընկերությունը ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հոկտեմբերի 8-ի թիվ 406-Ա հրամանի համաձայն ՀՀ Սյունիքի մարզի «Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թղկուտի տեղամասի թևերում և խորը հորիզոններում» երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2017թ. սեպտեմբերի 30-ը։ Համաձայն ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախնական գնահատման հայտի՝ փոփոխված ծրագրի, Ընկերությունը նախատեսում է աշխատանքների ժամկետը երկարաձգել ևս 2 տարով (այն շարունակել հանքային դաշտի առավել հետաքրքրություն ներկայացնող արևմտյան հատվածում և հրաժարվել հետախուզվող հանքային դաշտի շուրջ 50% տեղամասից):

Ներկայացվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների փոփոխված ծրագրը կազմված է Ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով:

Աշխատանքների նպատակն է կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատաքններ ՀՀ Սյունիքի մարզի Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թղկուտի տեղամասի ստորին հորիզոններում և թևերում՝ համատեղելով նախկինում, ինչպես նաև 2015-2017թթ. ընթացքում, մանրազնին հետախուզված աշխատանքների արդյունքները։ Հետազոտել հանքերսակման սահմաններում հայտնաբերած արդյունաբերական նշանակություն ունեցող հանքային մարմինները, բնութագրել դրանց տեղադիրքը, ճշգրտել վերջիններիս տարածական պարամետրերը, բնութագրել դրանց նյութական կազմը։ Կատարել տեղամասում հայտանբերած մետաղների նախնական գնահատում արդյունաբերական Ը կարգով և հաշվարկել դրանց կանխատեսումային ռեսուրսները Բι

կարգով, իսկ հանքավայարի ստորին հորիզոնների համար կատարել օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ C: կարգով: Տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքներն ամփոփել մանրագնին կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ ու պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվությունում:

Իրականացվող աշխատանքների արդյունքներով նախատեսվում է հանքավայրի տարածքում հետազա առավել մանրակրկիտ հետախուզման համար առանձնացնել օգտակար հանածոյի հանքայնացված լոկալ տեղամասեր: Ճշտել հանքավայրի ստորին հորիզոնների ու թևերի պղինձ-մոլիբդենային հանքայնացման գոտիների պաշարների հաշվին Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի թղկուտի տեղամասի տնտեսական և ռեսուրսային ներուժի ընդլայնման հնարավորությունները: Կատարված աշխատանքների արդյունքների հման վրա կազմել երկրաբանական հաշվետվություն՝ օգտակար հանածոյի կանխատեսումային ռեսուրսների և պաշարների հիմնավորված գնահատմամբ:

Աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը նախատեսվում է 2017թ-ի IV-րդ եռամյակին և ավարտվելու է՝ 2019թ.-ի I-ին եռամյակին:

Նախատեսված տեղամասում ընկերությունը կիրականացնի աշխատանքների 2-րդ փուլը, որի ընթացքում հետախուզական ցանցի խտացման միջոցով կկատարվի օգտակար հանածոների C: կարգով և P: կարգի կանխատեսումային պաշարների հաշվարկ:

ՀՀ Սյունիքի մարզի Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի խորը հորիզոններում և թևերում նախատեսվող աշխատաքնների մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարելիս հաշվի է առնվել տեղամասի տեղադրվածությունը, երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, տեղանքի ռելիեֆի ձևը և տարածքի չափսերը, հետախուզությունը նախատեսնվում է կատարել մեխանիկական սյունակային հորատման, հետախուզաառուների, հետախուզահորերի և նմուշարկման միջոցով: Ներկայացվող ծրագրի նպատակն է գնահատել տեղամասում պղնձի և մոլիբդենի պաշարները, հանքայնացման տեսակետից առանձնացնել հեռանկարային տեղամասեր, հետախուզել և գնահատել այդ տեղամասերում մետաղների և հանքաքարի պաշարներն ըստ C: կարգերի, իսկ կանխատեսումային պաշարները գնահատել ըստ P: կարգի: Տեղամասում կիրականացվեն երկրաբանական, երկրաքիմիական, երկրաբանահանության աշխատանքներ :

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության հանքային դաշտը համապատասխանում է 3-րդ խմբին: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տարածքը գրաղեցնում է շուրջ 130.15հա մակերես:

Հետախուզվող տարածքում առանձին տեղամասերի 1:2000 և 1:10000 մասշտաբների վերջնական երկրաբանական քարտեզների կազման, առկա ռեսուրսների եզրագծամն նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթային աշխատանքներ 130.15հա /1.30կմ<sup>2</sup>/ մակերեսի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Նախատեսվում է հետախուզվող տարածքի վրա ստեղծել 1 և 2 կարգի տրանզույցիոն ցանց և 1:100 մասշտաբի ստորգետնյա փորվածքների հատակագծերի կազմում, ինչպես նաև բոլոր փորվածքների մարկշեյտերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում:

Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի թղկուտի տեղամասի արևելյան թևում նախատեսվում է կատարել 1:2000 և 1:10000 մասշտաբների որոնողական երթուղիներ վերջինիս երկրաբանական կառուցվածքի և սահմանների ճշտման համար, համադրելով 2012-2017թ.թ. կատարված աշխատաքննությունները:

Ծրագրով նախատեսվում է անցնել 10կմ երթուղիներ /3կմ-ը 2000 մասշտաբի և 7կմ-ը 10000 մասշտաբի/ :

Որոնողական երթուղիների ժամանակ նախատեսվում է հաշվառել նաև 1970-ական թվականներին և 2012-2017թ.թ. ընթացքում անցած հին լեռնային փորվածքները (հետախուզաառուները, հետախուզահորերը, հանքուղիները, ովանցները, հանքափողերը), նշել դրանց գունվելու վայրը, տեղադրել քարտեզի վրա, հետազոտության դեպքում դրանց մաքրման և օգտագործման համար :

Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի թղկուտի տեղամասի ստորին հորիզոնների հետախուզման և զնահատման նպատակով նախատեսվում է հորատել 10 հորատանցք մինչև 250մ խորությամբ՝ 2500գծ.մ ընդհանուր ծավալով:

Հանքային գոտիների հորատիանուկի գծային ելքը պետք է կազմի ոչ պակաս քան 98%, ներփակող ապարներով յուրաքանչյուր երթում պետք է լինի 96%-ից ոչ պակաս: Որպես լվացման հեղուկ կիրառվելու է կավային և պոլիմերային լուծույթները:

Ծրագրով նախատեսվում է վերգետնյա փորվածքների հետախուզահորերի, հետախուզաառուների անցում: Փորվածքները միմյանց հետ կապակցված չեն: Դրանց տեղը և դիրքը կճշտվի դաշտային աշխատանքների ժամանակ, տեղում, երկրաբանական երթուղիների ընթացքում:

Հանքային մարմինների և գոտիների հզորությունը, տարածումը, դրանց հանքայնացման համասեռությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները, այլուվիալ-դեյլուվիալ նստվածքների ուսումնասիրման, ինչպես նաև մարմինների մորֆոլոգիան պարզելու և հանքային գոտիների բացման համար նախատեսվում է հետախուզաառուների անցում: Առուների խորությունը նախատեսվում է ընդունել 2մ, լայնությունը՝ 0.85մ (ելնելով հողաբուսական շերտի և հանքային մարմնի հզորությունից): Տեղամասում հիդրոթերմալ փոփոխված հզոր գոտիները, երակային ապարները ուսումնասիրելու համար նախատեսվում է անցնել 11 մազիստրալ առուներ, ընդհանուր՝ 1010գծ.մ երկարությամբ և 858.5մ<sup>2</sup> մակերեսով:

Նախատեսվող առուների անցման ամբողջ ծավալը կկազմի՝ 1717մ<sup>3</sup>, այդ թվում՝ 429մ<sup>3</sup> IV կարգի և 1288մ<sup>3</sup> VI- VIII կարգի ապարներով:

Նախատեսվում է անցնել 3 մաքրվածք ընդհանուր 75մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով: Մաքրվածքների լայնությունը ընդունվում է 3-4մ, կից պատի բարձրությունը 1.0-1.5մ: Մաքրվածքների անցումը նախատեսվում է իրականացնել ձեռքով, քանի որ տեղամասում ըստ նախնական ուսումնասիրությունների տվյալների, այլուվիալ-դեյլուվիալ, փուխր բեկորային, ձեղքավորված, դրեսվայի վերածված ապարների հզորությունը տատանվում է 0.56-8.0մ սահմաններում, իսկ երբեմն՝ 8.5մ:

Նախատեսվում է անցնել 11 հատ հետախուզահոր, յուրաքանչյուրը 4մ խորությամբ, ընդհանուր 44գծ.մ, որից IVկարգի ապարներում՝ 6.2գծ.մ, իսկ VI – VIII կարգի ապարներում 37.8 գծ.մ: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 1.5մ<sup>2</sup>, ամբողջ ծավալը՝ 66մ<sup>3</sup>:

Անցած հետախուզահորերը և առուները, համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո

Ենթակա են վերականգնման ամբողջ 1783մ³ ծավալով, այդ թվում հետախուզառուներ - 1717մ³, հետախուզահորեր - 66մ³:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները, հորատահանուկը: Նախատեսվում է իրականացնել հետախուզական փորվածքների տեղադիրքի կապակցում, մակերևույթի թերության անկյան և ազիմուտի չափում: Կատարվելու է մերկացված ապարների ուսումնասիրություն, նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում, լեռնային փորվածքների նկարագրում՝ նմուշարկման միջակայքերի նշմամբ:

Մշակման ենթակա են ակոսային, հորատահանուկի և համախառն նմուշների ամբողջ քանակը, համաձայն որի ակոսային նմուշներ - 112, այդ թվում հսկողական /համակցված/- 37, հորատահանուկային - 490, սղկվածքային նմուշներ - 12, քերծվածքային - 14, համախառը - 25, հսկողական - 10, խմբակային - 35, ֆազային - 6, ընդամենը - 704 նմուշ: Նմուշների մշակման աշխատանենքի կատարման որակը և ճշտությունը ապահովելու համար նախատեսվում է աշխատանքային բոլոր փուլերում իրագործել վերահսկման աշխատաններ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել լաբորատոր, միներալոգիական և պետրոգրաֆիական ուսումնասիրություններ, քիմիական և սպեկտրիալ անալիզներ: Հարգային անալիզների ենթակա են բոլոր 704 նմուշները: Հաշվի առնելով դրանց արտաքին և ներքին հսկողական անալիզների քանակը (5%), ապա հարգային անալիզների ընդհանուր քանակը կկազմի 739 նմուշ:

Հանքաքարի նյութական կազմը և նրա տեխնոլոգիական հատկությունները հետազոտելու նպատակով հետախուզահորերից նախատեսվում է 5 տեխնոլոգիական նմուշի հանույթ, որոնք հետազոտվելու են <<Լեռնամետալուրգիայի ինստիտուտի լաբորատորիայում>>, որի հիման վրա կներկայացվի հանքաքարի տեխնոլոգիական մշակման սխեման: Այդ նմուշներից 3-ը կկազմվեն շարքային խառը նմուշներից, իսկ 2-ը հորատահանուկներից: Նախատեսվում է այն փորձարկել գործարանային պայմաններում 5 տեխնոլոգիական նմուշների փորձարկում՝ ընդհանուր 1000.0տ ծավալով:

Հանքային դաշտում ինժեներակրթարանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ: Նախատեսվում է կատարել նաև հանքերնակման ներփակող և պարփակող ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները, որով կորոշվի ապարների կայունությունը բնական պայմաններում:

Նախատեսվում է 10 հորատման հրապարակների՝ յուրաքանչյուրը 35մ² մակերեսով, և դրանց մոտեցման ձանապարհների նորոգում 2925մ³ ծավալով՝ շուրջ 6.5կմ երկարությամբ, միջինը 1.5մ լայնությամբ՝ 4-րդ կարգի ապարներում:

Ընդերքի ուսումնասիրման աշխատանքները անմիջականորեն կապված են շրջակա միջավայրի պահպանման խնդիրների հետ: Որոնողական աշխատանքների իրականացումը շշակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն և այդ ազդեցությունը նվազեցնելու կամ բացառելու նպատակով կկիրառվեն բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- պարբերաբար կիսկվեն մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա, նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0,004գ փոշի օդի 1մ³-ում;

- փոշեգրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կկատարվի ջրանում;

- օգտագործվող ազրեգատները կաշխատեցվեն սարքին վիճակում վնասակար գագերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 07.09.2017թ. Ազարակի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների արձանագրությունը, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման համար ընտրված տեղամասը գրաղեցնում է  $1.30\text{կմ}^2 / 130.15\text{հա}$ / տարածք և գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրաձոր համայնքի վարչական սահմաններում (Վարդանիձոր բնակավայրերի սահմաններում): Երկրաբանական ուսումնասիրության համար ընտրած տարածքը գուրկ է անտառածածկույթից և բացակայում են անտառային հողերը: Հայցվող տեղամասը հարակից է <<Արևիք>> ազգային պարկի պահպանման գոտուն:

07.09.2017թ. Ազարակի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների ժամանակ հանրության կողմից հնչեցին դրական կարծիքներ և հավանություն նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նշվեց, որ ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է նշված տարածքում իրականացնել միայն երկրաբանահետախուզական աշխատանքներ: Հետագա հանքի շահագործման աշխատանքները կիրականացվի երկրաբանահետախուզական աշխատանքների դրական արդյունքների և հաստատված պաշարների հիման վրա համապատասխան նախագծային փաստաթղթերի կազմումից հետո, որը համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի փորձաքննության կենթարկվի երկու փուլով՝ որպես Ա կատեգորիայի նախատեսվող գործունեություն: Հանրային քննարկումների ընթացքում պարզվեց, որ բացի <<Թաթարողուն>> ՍՊԸ-ից տարածաշրջանի հանքերների դաշտում երկրաբանական ուսումնասիրության և հանքարդյունահանման աշխատանքաներ է իրականացնում նաև <<Ղարագույշաններ>> ՍՊԸ՝ Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքային դաշտի 2016-2019թթ. երկրաբանական ուսումնասիրության ծրագիր և Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կնտրոնական տեղամասի արդյունահանման աշխատանքներ: Հայցվող Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի՝ Թղկուտի տեղամասը, <<Ղարագույշաններ>> ՍՊԸ-ի տրամադրված տեղամասից գտնվում է  $10.0\text{կմ}$  հեռավորության վրա (համաձայն հավելված 2-ի՝ Այգեձորի և Վարդանիձորի երկրաբանական աշխատանքների տարածքները իրադրային սխեմայի):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հետախուզաառուների, հետախուզակորերի և խրամների, հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման, շինարարական տեխնիկայի տեղաշարժման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի արդյունքում կառաջանան դիզելային վառելիքի այրման արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Բացառվում է ջրային ավագանի աղտոտումը:

Աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հետևյալ բնապահպանական միջոցառումների կիրառմանը, որոնք ընդգրկում են հետևյալ հարցերը:

- օդային ավազանի պահպանումը վնասակար արտանետումներից՝ ջրցանման և աշխատանքներում սարքին մեքենասարքավորումների օգտագործմամբ;
- ջրային ավազանի պահպանումը կեղտոտումից՝ հորատման ժամանակ օգտագործվող ջրերը հատուկ կահավորված փոստրակներում հավաքմամբ և կրկին օգտագործմամբ, բացառելով ջրերի արտահոսքը;
- ապահովել լանդշաֆտների վերականգնման աշխատանքները՝ կատարելով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա;
- հողերի պահպանության կարգի պահանջների ապահովում;
- կանխարգելել կամ մեղմացնել էկոհամակարգերի վրա մարդածին բացասական ազդեցության գործոնը;
- աշխատանքների հետևանքով բնությանը հասցված բացասական ազդեցությունների վերացում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզառուների, հետախուզահորերի, հորատահարթակների կառուցման և ձանապարհների վերականգնման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է ելնելով հետախուզա-առուների, հետախուզահորերի տարածքի մակերեսից և հողաբուսաշերտի  $0.30\text{m}$  վերականգնման պայմանից: Հետախուզառուների, հետախուզահորերի և հորատման հրապարակների ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է  $1224.5\text{m}^2$  /հորատահրապարակներ  $350.0\text{m}^2$ , հետախուզառուներ  $858.5\text{m}^2$  և հետախուզահորեր  $16.5\text{m}^2$ /, որտեղ հողաբուսական ծածկ առկա է միայն  $56\%$  մակերեսում: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է՝  $206.0\text{m}^3$ , որը կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի  $735000.0$  դրամ, այդ թվում հորատիրապարակների համար՝  $210000.0$  դրամ, հետախուզառուների՝  $515100.0$  դրամ և հետախուզահորերի՝  $9900.0$  դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է  $1224.5\text{m}^2$  կամ  $0.12\text{ha}$ : Հողօգտագործման համար վնասի փոխատուցման գումարը համայնքներին կկազմի՝  $36.0$  հազ. դրամ:

Ծրագրով նոր ձանապարհների կառուցում չի նախատեսվում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ձանապարհները, որոնք անհրաժեշտության դեպքում մասնակիորեն կվերանորոգվեն:

Նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բարադիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Նշեմ նաև, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի հոդված  $20\text{-ի}$   $7\text{-րդ}$  կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

## Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես՝ սեփականաշնորհված, զյուղնշանակության հողատարածքներում աշխատելու նպատակով):
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետեւել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումներին (մասնավորապես՝ բացառելով անտառային հողերում հողաշերտի խախտումը և ծառահատումները) և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացնցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում՝ տեղամասում առկա ջրային ավազանի վրա, հնարավոր վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման նպատակով անհրաժեշտ է ուղղորդվել ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով:
4. Հատուկ պահպանվող տարածքներում բացառել որևէ աշխատանքի իրականացում:
5. Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ նախատեսվող գործունեության տրամադրված տարածքը հարակից է <<Արևիք>> ազգային պարկին, ուստի աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի և ՀՀ կառավարության <<Արևիք>> ազգային պարկի ստեղծելու, <<Արևիք>> ազգային պարկի և <<Արևիք>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին>> 15.10.2009թ. N1209-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի պահանջները:
6. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգի, հետձրագրային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հասարակայնության համար:
7. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի կուտակումն և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Թաթարություն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ստորին հորիզոններում և թևերում 2017-2019թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամկետի երկարաձգման>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝

Կ. Մովսիսյան